Հաստատում եմ Digitally signed by SHMAVONYAN SYUZANNA 7604800041
Date: 2023.09.11 17:03:08 MSK

Ուսումնական նախագծի պլանավորման ձևաթուղթ

Նախագծի ղեկավար՝ Ա. Աղաջանյան.

Թեմա՝ *Գրել առարկայական ծրագրի թեման, որի շրջանակում իրականացվելու է նախագիծը։*	
Նախագծի անվանում՝	Պահպանենք մեր ավանդույթները։ Բարեկենդան։
Առարկա(ներ)՝	Երաժշտություն
Ուսումնական տարի, կիսամյակ՝	2023-2024 II կիսամյակ
Դասարան՝	7-րդ
Տևողություն՝	6-շաբաթ
Նախագծի իրականացման փուլեր	1. փուլ / 12.01.2024թ./ նախագծի ծրագրում. 2.փուլ /19.01.2024թ. /նախագծի աշխատանքի տեսական մասին կատարում։ 3. փուլ /26.01.2024թ./պատրաստի նյութերի վերանայում։ 4.փուլ /02.02.2024թ/ աշխատանքների իրականացում։ 5.փուլ /09.02.2024թ./ վերջնական արդյունքների կազմում։ 6.փուլ / 16.02.2024թ. / արդյունքների ներկայացում։
Վերջնաժամկետ՝	16.02.2024թ.
Տեսակը՝	միջառարկայական
Չևաչափը՝	թիմային
Ուսումնական նախագծի նպատակը՝	
.Ճանաչեն ու մեկնաբանեն ազգային ծեսը։ *.Իմանան ու գեղեցիկ կատարեն ծիսական երգերն ։* *.Ճիշտ մեկնաբանելով կատարեն պարային շարժումները։*	
Ուսումնական նախագծի վերջնարդյունքները՝	

.Կներկայացնեն ավանդույթը ,դրա ծագումն ու պատմությունը.
.Կիմանան ու կմեկնաբանեն ծիսական երգերը,կկարողանան պարել ազգային պարեր.
.Կձևավորվի ազգային ավանդույթները կրող ու պահպանող ,ազգային մշակույթը սերունդներին փոխանցող հասարակություն:

Ուսումնական նախագծի նկարագիրը

.Նախագծի ծրագրավորման փուլում աշակերտները կծանոթանան հայկական ավանդույթներին,հատկապես <<Բարեկենդանին>>,այդ տոնին հնչող երգ-աժշտությանը:
.Տեսական մասի կատարման փուլում կհավաքագրեն նյութեր և տեղեկություններ ավանդույթին ավելի մանրամասն ծանոթանալու համար:
.Քննարկման փուլում կվերանայեն հավաքագրված նյութերը , տեղեկությունները,կրիչի վրա պահպանած վիդեոնյութերը,տեսահոլովակները:
Ուսուցչի օգնությամբ կգրեն փոքրիկ բեմականացման սցենար,այն կբաժանեն ըստ դերերի ,ապա կնախապատրաստվեն աշխատանքների իրականացմանը:Ինչպես նաև կընտրեն երգերն ու պարերը ,որոնք նույնպես ներկայացնելու են:
.Արդյունքների կազմման ընթացքում աշակերտները իմի կբերեն բոլոր կատարված աշխատանքները ,կլուծեն ծագած խնդիրները, ուսուցչի ուղղորդմամբ կկարգավորեն դերակատարումները և կծանոթանան այն կերակրատեսակներին ,որոնք նախագծի ներկայացման օրը պետք է համտեսեն:
.Երբ ամեն ինչ պատրաստ կլինի, խումբն կկատարի վերջնական արդյունքների կազմում ,որն էլ կներկայացվի նախագծային պրոդուկտի տեսքով:
.Արդյունքները կներկայացվեն պաստառով,գեղեցիկ ցուցահանդեսով ,ուրախ ավանդական երգ- պարով և բեմականացմամբ,իհարկե բարձր տրամադրությամբ ու ազգային կերակրատեսակներով:

Կարողունակություններ, որոնք կզարգանան այս նախագծի ընթացքում

☒ Սովորել սովորելու կարողունակություն

☒ Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն

☒ Լեզվական գրագիտություն և կարողունակություն

☒ Մշակութային կարողունակություն

☒ Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն

☒ Թվային և մեդիա կարողունակություն

ՀՊՉ –ի հղումը՝

Հանրակրթության պետական չափորոշիչ, 2021, https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

մարտահրավերային հարցը/հիմնախնդիրը

Հայկական ավանդույթների պահպանման կարևորությունը և նշանակությունը մեր կյանքում:
Հիմնական հարցեր
.Ինչ է ազգային երգ ու պարը; *.Ինչ գործոնների ազդեցությամբ է ձևավորվել ազգային երգ ու պարը:* *.ինչ է ծեսն ու ծիսական երաժշտությունը :* *.Արդյո՞ք ծեսերի ընթացքում երգել կամ պարել են:* *.Ինչ ավանդույթ է բարեկենդանը և երբ են այն տոնում:* *.Ինչպիսի երգեր, պարեր ու խաղեր են կատարում այդ տոնի ընթացքում.* *.Արդյո՞ք մեզանից յուրաքանչյուրը պետք է լինի ազգային ավանդույթների կրողը,ինչու՞:*
Սովորողների ինքնուրույն հետազոտական գործունեություն
.Ուսումնասիրել ծեսերն ու ծիսական երգերը :Առանձնացնել բարեկենդանին նվիրված թեմաները: .Ուսումնասիրել կերպարները: .Սովորել երգել ու պարել համապատասխան երգերը:Տեղադրել կրիչի վրա ընտրած երաժշտությունը: .Այցելել Եկեղեցի ,լսել հոգևոր հոր պատմածը տոնի մասին,ձայնագրել,ինչպես նաև լսել տարեց մարդկանց պատմությունները ու ձայնագրել: .Ստեղծել փոքրիկ բեմականացում և բաժանել դերակատարումները: .Ուսումնասիրեն ավանդույթին ճաշակվող կերակրատեսակները: .Ուսումնասիրեն ու պատրաստեն համապատասխան դեկորացիա: .Պատրաստեն աֆիշ-պաստառ:
Միջառարկայական կապեր
Երաժշտություն Տեխնոլոգիա Գրականություն
Ուսումնական նախագծի վերջնարդյունքների ներկայացման տեսակներ

Բեմականացում. Նյութի ներկայացում. Երգ-պար։ Ցուցահանդես-համտես. Աուդիո երաժշտություն,ձայնագրություններ։
Հետազոտության աղբյուրներ
Համացանց Գրադարան Այլ աղբյուրներ։
Գնահատում
Ռուբրիկ սանդղակ։